

1682

ԴՐՈՑ. Խ. ՍԱՄԿԵԼՅԱՆ

**ԽԱԼԴԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ**

9/395.5  
Ս-17

ՍԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ  
ՑԵՐԵՎԱՆ

1939

9(395.5)

4-17

ար.

ՊՐՈԳ. Խ. ՍԱՄԿԵԼՅԱՆ

30 MAY 2011

12 SEP 2006

# ԽԱԼԴԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ



4432  
39

Խմբագիր՝ Հ. ԽՈՒՇՈՍՅԱՆ  
Տեխ. խմբ. և՝ ԽՈՉԱՏՐԹԱՆ  
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ  
Գլավխոտի լիազոր՝ Ն.—2827 Գառվեր Մ 103, Տիրամ 1500  
Հանձնված և արտադրության 19 փետրվարի 1939 թ.  
Ստորագրված և տպագրելու 19 Մարտի 1939 թ.  
Մանկավարժական Բնագրաբանի տպարան, Մարզի փող. Մ 17, Յերևան

I

Պատմության աղբյուրներ

Խալդական պետությունն առաջացել է մեր թվարկությունից առաջ IX դարի սկզբին, նա բռնում էր Հայկական բարձրավանդակի տարածությունը հյուսիսում՝ Սևանի լճից մինչև Վանի լիճը՝ հարավ-արևելքում և Ուրմիայի լիճը՝ հարավ-արևելքում:

Խալդական հասարակության պատմության հիմնական աղբյուրներն են սեպագիր հուշարձանները, վորոնք հասել են մեզ ասորեստանյան և ապա խալդական թագավորներից: Ասորեստանյան սեպածե արձանագրությունները, վորոնք հիշատակում են խալդերի մասին, սկսվում են X դարից մեր թվարկությունից առաջ, իսկ բուն խալդական արձանագրությունները յերկվում են IX դարից: Վերջիններն սկզբում գրված են յեղել ասորեստանյան լեզվով ու սեպագրերով, իսկ IX դարի յերկրորդ կեսից արդեն գրվում են խալդական լեզվով և իրենց լեզվական հնչյուններին հարմարեցրած սեպագիր նշաններով:

Խալդական արձանագրությունները հայտարերկու ու հավաքելու նպատակով առաջին հետախուզական գիտական արշավանքը ձեռնարկեց Ֆրանսական կառավարությունը, յերբ արդին հայտնի եյին, վոր այդպիսի հուշարձաններ գտնվում են Վան քաղաքում և շրջակայքում: Այդ գործը հանձնարարվեց գերմանացի յերիտասարդ գիտնական Շուլցին, վորը 1828 թ. ֆրանսական կառավարության միջոցներով ձանապարհվեց դեպի Վան և այստեղ մեկ տարվա ընթացքում յերևան հանեց 38 արձանագրություններ: Սակայն Շուլցը չկարողացավ ավարտել իր գործը, հաջորդ տարին նա սպանվեց Զուլամերիկ գավառում:

Շուրջի գյուտերը մեծ հետաքրքրութիւն շարժեցին Յեվրոս պայի արեւելագետները շրջանում: Այնուհետեւ մի շարք յեվրոպական գիտնականներ ու Արեւելքի պատմութեան սիրողներ անդադար մինչև XX դարի սկզբները հետախուզումներ եյին կատարում, հայտնաբերում և ուսումնասիրում խաղաղական հնութիւններ, առաջին հերթին սեպագծե արձանագրութիւններ: Հիշատակենք նրանցից մի քանի ականավոր անուններ, այն է՝ անգլիացիներ Լայարդ, Կիլյատն, Հորմուզդ Ռասսամ, Ֆրանսացիներ Մյուլլեր Սիմոն, Հիլերնա, Ժակ Մորգան, գերմանացիներ Վոլդեմար Բելք և Լեման-Հաուպտ, ռուսաստանցիներ Մ. Նիկոլսկի, Ա. Իվանովսկի, Ն. Մառը իր աշակերտ, իսկ այժմ ականակցիկոս Հ. Որբերուհետ, հայերից Սմբատյան Մարութ (1860—1880 թ. թ.), վերջինս հայտնաբերել է մոտ 12 արձանագրութիւններ:

Այդ հետախուզումների հետեւանքով պարզվեց, վոր խաղաղական արձանագրութիւնները վոնց միայն կինտրոնացած եյին Վանի լճի շրջանում, ուր գտնվում եր խալդերի մայրաքաղաքը, այլ և անընդհատ շարունակվում եյին մինչև հյուսիս՝ Արարատյան դաշտի վրայով և Սարիղամիշի ուղղութեամբ մինչև Սեանի լիճը, Արագած լեռն ու Չալդեր լիճը, ղեպի արևմուտք՝ մինչև Փոքր Ասիայի սահմանները, Մալաթիա, իսկ ղեպի արեւելք՝ մինչև Կիլիկիոն և Տուրքոյ, այժմյան Թուրք-պարսկական սահմանը: Վերջին տարիները, խորհրդային իշխանութեան որով մեզ մոտ հայտնաբերվեցին Նոր-Բայազետում (1927 թ.) և Յերևանին մոտակա Չարբախ գուղի հողերում (1936 թ.) խաղաղական արձանագրութիւններ: Այսպիսով մինչև այժմ հայտնաբերվել են ու հրատարակվել 200-ից ավելի խաղաղական արձանագրութիւններ:

Այդ արձանագրութիւնները ընթերցումը կապված եր դժվարութիւնների հետ, քանի վոր խաղաղական լեզուն մեզ անհայտ եր և նրա բնագրերի հնչյունները մոռում եյին անողձվածային: Անցյալ դարի 80-ական թվականների սկզբներին մի քանի գիտնականների կողմից այդ բնագրերը վերծանելու և կարդալու անհաջող փորձերից հետո Ֆրանսացի ասորագետ Ս. Գյույարը 1880 թ. հրատարակեց մի քանի ցուցմունքներ, թե ինչպես կարելի յե վերծանել խաղաղական նշանադրերը, հիմնվելով արձանագրութիւնների գրերի բոլորի յեզրափակիչ տողերի վրա, վորոնք

միանման են և ըստ հին արձանագրութիւնների սովորական ձևի, պարունակելու եյին ստերեոտիպ նշովական խոսքեր: Ահա այդ ցուցմունքներից յիշելով անգլիական գիտնական Ա. Մեյլը 1882 թ. կարողացավ վերծանել ու թարգմանել այդ արձանագրութիւնները, առաջադրելով վերծանման իր սխառեմը, վոր հիմնահանում մինչևի՛ որս ել պահպանում է իր նշանակութիւնը:

Ա. Մեյլը կատարեց նաև խաղաղական քերականութիւն կազմելու առաջին փորձը: Բայց և այնպես խաղաղական արձանագրութիւնների ընթերցման ու թարգմանութեան մեջ մնում են մի քանի անորոշութիւններ, յերբեմն ել յենթադրական ճշտութիւններ, վորովհետեւ տակավին վերջնականորեն չեն պարզարանված խաղաղական լեզվի քերականական կանոնները: Այդ ուղղութեամբ վերջին տարիներում նորանոր առաջադրութիւններ են լինում խաղաղագետների կողմից: Այժմ գրեթե բոլորը հանգում են այն կարծիքի, վոր խաղաղական լեզուն վոնց հնդկերոպական է և վոնց ել սեմիտական, այլ նա ինքնուրույն լեզու յե, վորը պատկանում է կովկասյան ժողովուրդների լեզվախմբին: Ակադեմիկոս Ն. Մառն այդ հիման վրա խաղաղական լեզուն համարում է հարեթական: Ներկայումս մեզ մոտ խաղաղական լեզվի ուսումնասիրութիւնն այդ ուղղութեամբ առաջ է տանում Ն. Մառի աշակերտ ակադեմիկոս Ի. Մեշչանինովը:

Վերոհիշյալ սեպագիր հուշարձանները, բացառութեամբ մի-յերկուսի, հայտնաբերվել են առանց հնագիտական պեղումների, մեծ մասամբ յերկրի մակերեսին: Չեսիկին խաղաղական հասարակութեան վերաբերյալ այլ պատմական հուշարձաններ հատուկ հնագիտական պեղումներով հայտնաբերելու համար՝ շատ քիչ բան է արված: Այդ ուղղութեամբ մի քանի պեղումներ են կատարել Վ. Բելքն ու Լեման-Հաուպտը Վանի շրջակայքում (Թուրքակ-Կալե, Շամիրամալիթի), ուր թեև գտել են բավականի հետաքրքիր ու թանգարժեք պատմական իրեր, սակայն այդ պեղումները կատարվել են արդի հնագիտութեան պահանջներին անհամապատասխան մեթոդներով, ուստի շատ բանով նրանք կորցնում են իրենց նշանակութիւնը:

Բայց կան բավականաչափ նկարագրական հետազոտութիւններ խաղաղական գանաղան հուշարձանների, վորոնք գրտ-

նըվում են յերկրի յերեսին, այն է՝ քարակոփ շենքերի և կա-  
տույցքների, ամրոցների ու բերդերի և այլն: Այդպիսի աշխա-  
տանքներով հայտնի յեն վերոհիշյալ գերմանացի գիտնականներ՝  
Վ. Բելքն ու Լեման-Հաուպտը (1898—1899 թ. թ.), ռուս գիտ-  
նականներ՝ Հ. Որբելի (1916 թ.), Մ. Նիկոլսկի և Ի. Իվանովսկի  
(1896 թ.) ու Պիոտրովսկի (1933 թ.): Վերջին յերեքը նկարագրում  
են Խորհրդային Հայաստանի սահմաններում գտնված խալդական  
հնույթյունները:

Անշուշտ հնագիտական պեղումների այդ սակավութունը  
մի խոշոր բաց է խալդական նյութական կուլտուրան մանրա-  
մասնորեն պարզելու և ըստ այնմ խալդերի սոցիալ-տնտեսական  
ձևերն ու գաղափարախոսական վերնաշինքը պատկերացնելու  
համար: Մինչդեռ բոլոր տվյալները բացահայտորեն ցույց են  
տալիս, վոր գետնի խորքերում, նախկին խալդական ամրոց-բեր-  
դերի բնակավայրերի մոտ, թագնված են մուսուլման հարուստ հնա-  
գիտական իրեր: Ահա այդ պեղածո իրերը կարող էյին լրացնել  
խալդական հասարակութան պատմութունը, վորը սեպագիր  
հուշարձաններում կցկտուր ու ժլատ խոսքերով է հանդես գալիս:

## II

### Խալդ-Ուրարտու

Խալդ ժողովրդի մասին ամենահին հիշատակումը հանդի-  
պում ենք ասորեստանյան սեպագծե արձանագրություններում՝  
այդ ժողովրդի դեմ ասորական թագավորների վարած պատերազմ-  
ների կապակցությամբ: Ասորեստանյան թագավոր Ասուրնա-  
սիրբալը (884—860 թ. նախքան մեր թվարկ.) անվանում է այդ  
յերկիրն ու ժողովուրդը վոչ թե Խալդ, այլ Ուրարտու, վոր-  
պիսի անունը մինչև վերջն էլ պահպանվել ու գործածվել է  
ասորեստանյան հուշարձաններում: Սակայն Ուրարտու անունը  
մենք հանդիպում ենք նաև ավելի հին ասորեստանյան արձա-  
նագրություններում, տակավին XIII դարում նախքան մեր թը-  
վարկ. Սալմանասար I թագավորը (1280—1261 թ. թ.) հիշատակում  
է իր նվաճումներն Ուրարտու յերկրում, վորը նրա մոտ  
հնչում է Ուրուատրի անունով: Այս հնագույն

հիշատակարաններում Ուրարտու անելով՝ պետք է հասկանալ  
վոչ թե խալդեր, այլ մի ընդհանուր անուն քաղաքական-  
պետական տերիտորիայի, վոր ներգրավում է Միջագետքի հյուս-  
սիսային մասը, այն է՝ յերկու Յեփրատների (Փրատ ու Արածանի)  
ավազանում ամփոփված Հայկական բարձրավանդակի մասը:

Խիստ բնորոշ է, վոր խալդերն իրենք իրենց յերեք ու-  
րարտացի չեն անվանում նույնիսկ այն ժամանակ, յերբ Ասո-  
րեստանյան թագավորները սովորաբար այդ անունով էյին հոր-  
ջորջում այդ ժողովրդին: Այս դեպքում Ասորեստանն անշուշտ  
Ուրարտու տերմինով վոչ թե էթնիկ, այլ աշխարհագրական  
իմաստավորում է տվել խալդերին, իբրև մի ժողովրդի, վոր հե-  
տագայում բարձրացավ Ասորեստանին սահմանակից հյուսիսային  
տերիտորիայում: Իսկ այդ հյուսիսային տերիտորիան իր քաղա-  
քական առումով ասորեստանյան թագավորներին XIII դարից  
հայտնի յեր, ինչպես տեսանք, Ուրարտու անունով: Վոր իրոք  
հնում յեղել է առանձին Ուրարտու յերկիր կամ ժողովուրդ, դա  
ակնբեր է նրանից, վոր հին հունական պատմագիրները հիշա-  
տակում են այդ ժողովուրդն ալարոտ, յերկիրը՝ Ալարոտիա  
անունով, վոր Ուրարտուի աղճատված ձևն է: Նմանապես այս-  
պես կոչված Ասովածաշնչում (Բիբլիա) հանդիպում ենք Ա-  
րարոտ, Արարատ անունով յերկիր, վոր հոմանիշ է հայկա-  
կան Այրարատ կամ Արարատ նահանգին: Այսպիսով Ու-  
րարոտու-Ալարոտ-Արարատ միևնույն նշանակութունն են  
ներկայացնում, բայց տարբեր արտասանությամբ: Ահա ասորես-  
տանյան արձանագրություններում միշտ գործածվող Ուրարտու  
կամ ուրարտացի անունը, վորով նրանք կոչում էյին IX դարից  
սկսած՝ խալդերին, ավանդաբար պահպանվեց նաև պատմագի-  
տության մեջ, վորտեղ մինչև այսօր էլ Ուրարտիա և Խալդիա,  
կամ ուրարտացի և խալդ տերմինները կիրառվում են իբրև  
հոմանիշ անուններ:

Խալդ անունը տալիս էյին իրենց միայն խալդերը, կոչելով  
իրենց յերկիրը Խալդիինի. այդ անունը նրանք կապում էյին  
իրենց գլխավոր աստված՝ Խալդի անվան հետ: Սակայն ամե-  
նահին խալդական արձանագրություններում (IX դ.) խալդական  
թագավորներն իրենց կոչում էյին «թագավոր Նայիրիի և Շու»

րայի, իսկ հետագայում նաև «Բիայնայի», վորից ել բզիում ե հայացրած «Վան» անունը:

Հայկական բարձրավանդակը խորին հնում, գրեթե միա-  
ժամանակ Ասորեստանի յերևումով պատմական ասպարիզի վրա,  
հանդիսանում էր Նայիրի ժողովուրդների յերկիր: Նայիրի  
անունն առաջին անգամ հիշատակվում է Ասորեստանյան թա-  
գավոր Սալմանասար I-ի արձանագրության մեջ, վորից հետո  
այդ անունը մշտապես հանդիպում ենք հաջորդ թագավորների  
արձանագրություններում: Նայիրի, վոր նշանակում է «չրբի  
յերկիր», ըստ ասորեստանյան արձանագրությունների իմաստի  
իրենից միավաղաղ քաղաքական-պետական կազմակերպություն  
չի ներկայացնում, այլ իրարից անկախ մարզեր ու ժողովուրդ-  
ներ իրենց առանձին արքայիկներով: Այդ Նայիրի ժողովուրդ-  
ներն, ըստ յերևույթին, դաշնակցություն էյին կազմում, վոր  
հանդես եր գալիս արտաքին ընդհանուր թշնամու հարձակումների  
դեմ: Ահա այդ Նայիրի յերկրների դեմ էյին անդադար պատերազմ-  
ներ մղում ասորեստանյան աշխարհակալներն սկսած XV դարից: V

Ուշագրավ են ասորեստանյան թագավոր Թիզլետ-Պիլեսեր  
I-ի (1115—1103 թ. նախքան մեր թվարկ.) արձանագրություն-  
ները, ուր նա խոսում է Նայիրի յերկրների դեմ վարած իր պա-  
տերազմների մասին, վորոնք շարունակություն էյին իր նա-  
խորդների՝ Սալմանասար I և Տուկլատ-Նինիբի թագավորների  
նվաճումների և ապա հետագայում ծագած տեղական ապստամ-  
բությունների: Տիզլետ-Պիլեսերն իր արձանագրություններում  
նշում է, վոր իր դեմ ապստամբել էյին Նայիրի 23 թագավորներ,  
վորոնց թիվը հետո հասնում է 60-ի, յերբ միանում են նաև  
Նայիրի մյուս յերկրները: Այս «թագավորները», անշուշտ, իրա-  
կանում յեղել են ցեղապետներ, այսինքն այնպիսի հասարա-  
կությունների գլխավորողներ կամ իշխողներ, վորոնք դեռևս  
գտնվում էյին տոհմատիրական կարգերի քայքայման վերջին շըր-  
ջանում և վորտեղ նոր էյին սկսել կարգանալ դասակարգային  
հակադրությունները:

Ասորեստանյան թագավորների անընդատ նվաճողական  
եքսպանսիան դեպի հյուսիս՝ Նայիրի յերկրները, պատճառ եր  
դառնում տեղական ժողովուրդների կողմից բռնկող մշտական ա-  
պստամբությունների: Այս հանգամանքներում, վորպեսզի հնա-

բավոր լիներ ավելի հաջող դիմադրել ասորեստանցիների ներ-  
խուժմանը, թելադրվում էր Նայիրի ժողովուրդների քաղաքական  
միացումը, վորը և հետագետև գարգանալով տեղիչ ունենում ըստ  
յերևույթին IX դարի առաջին կիսին: Այս քաղաքական միացու-  
մը առաջանում է այն ժամանակ, յերբ Նայիրի հասարակություն-  
ները սոցիալապես շերտավորված էյին և, դասակարգայնորեն  
տրոհված լինելով, ներկայացնում էյին պետական վորոշ կազմ:  
Վերոհիշյալ 23 ցեղերից մեկը, այն է՝ խալդերը, հանդիսանա-  
լով նրանց մեջ ամենաուժեղն ու քաղաքականապես ավելի կազ-  
մավորված, անշուշտ առաջատար գեր է խաղացել ու կարողացել է  
իր ազդեցության և ապա իր գերիշխանության ներքո առնել մյուս  
ցեղերը, ներգրավելով նրանց մեկ պետականության մեջ:

IX դարի (նախքան մեր թվարկ.) ասորեստանյան արձանա-  
գրություններում հանդիպում ենք Արամե, Լուաիպրի,  
Սարգուր անունները, վորոնք կոչվում էյին, ըստ այդ արձանա-  
գրությունների, Ուրալուի թագավորներ և վորոնք պետք է  
համարվեն խալդական պետության առաջին հիմնադիրներ: Սա-  
կայն նույն ժամանակվա խալդական արձանագրություններում  
Լուաիպրին և Սարգուրն իրենց անվանում են Նայիրի թագա-  
վորներ: V Այստեղ դուգադիպում են Ուրարու և Նայիրի անուն-  
ներն իբրև հոմանիշ տերմիններ և, ինչպես նկատում ենք,  
վերաբերում են միևնույն պետական տերիտորիային, թեև  
առաջին անունը բղխում է ասորեստանցիներից, իսկ յերկրորդը  
խալդերից, վորոնք գարմանալի հետևողականությամբ բնավ չեն  
հիշատակում առաջին անունը: Այստեղից յեղրակացնելու յենք,  
վոր Նայիրի պետության, այսինքն նախնական Սալդիայի կազ-  
մավորման ժամանակ, Ուրարուուն, վոր գտնվում էր Նայիրի  
յերկրների հյուսիսային մասում, այլևս գոյություն չուներ իբրև  
ինքնուրույն քաղաքական յերկիր, ուստի և չի հիշատակվում  
խալդական արձանագրություններում: Իսկ Ասորեստանի թագա-  
վորները, վորոնք XIII դարից իրենց նվաճողական հարձակում-  
ները ուղղում էյին Ուրարուի վրա, շարունակում են իրենց սո-  
վորության համաձայն՝ ավանդաբար մինչև վերջն ել կառչել  
այդ տերմինին և այդ անունը տարածում են հետագայում կազմա-  
կերպված Նայիրի կամ Սալդ պետության վրա: Այստեղ նշմա-  
րում ենք ասորեստանցիների մտայնության մեջ տրամաբանա-

կան այն դրույթը՝ pars pro toto, վոր մասնիկով վորոշում ե ամբողջը, այն ե՝ Ուրարտու անունով ներկայացվում ե խալդական ամբողջութունը: ✓

### III

#### Խալդական պետություն

Նայիրի թագավորութունը, կամ ըստ ասորեստանյան արձանագրությունների, Ուրարտու թագավորութունը գտնվում եր Վանի լճից դեպի հյուսիս՝ Արածանիի ավազանում և Արամե թագավորի ժամանակ, ընդարձակվելով, իր մեջ ե անում նաև Վանի լիճն ու տարածվում դեպի արևելք: Նրա մայրաքաղաքը կոչվում եր Արդասիու, վոր գտնվում եր Վանի լճից դեպի հյուսիս:

Ուրարտուն, այսինքն խալդերը, սգովելով Ասորեստանի քաղաքական թուլացումից և ներքին անկայությունից, IX դ. վերջից մինչև VIII դ. կեսին, այն ե՝ 70 տարիների ընթացքում, սկսում են յետ մղել Ասորեստանին և նույնիսկ գրավում են նրա տերիտորիայի հյուսիսային մասերը: Այս տարիների ընթացքում Նայիրի պետութայն կենտրոնացումը և թագավորների իշխանութայն ուժեղացումն Արամեից սկսած՝ հետդեհտե աճում ու ամրանում ե խալդական տերիտորիայի ծավալման հետ զուգահեռաբար:

Արամեից հետո հաջորդական կարգով յերրորդ թագավորը Սարգուր I ե, վորն իրեն կոչում ե Լուտիպրիի վորդի. վերջինս ել ամենայն հավանականությամբ Արամեի վորդին եր: Սարգուրի որով (835—820 թ.թ. նախքան մեր թվարկությունը) Ուրարտուն այնքան ուժեղացավ, վոր նա մայրաքաղաքը տեղափոխում ե Վանի լճի հարավ-արևելյան յեզերքը, հիմնելով այստեղ Տուշպա քաղաքը, վոր հին հայկական աշխարհագրական անուններում պահպանվել ե Տոսպ, իսկ հին հունական պատմագրութայն մեջ Տոսպիդիս անունով: Այստեղ, Վանի լճի յեզերքին Սարգուրը կառուցում ե, սգովելով բնական դերքի հարմարություններից, մի բերդ, վորի ավերակները պահպանվել են մինչև այսօր: Այսպիսով հիմնվում ե նոր պետութուն, վոր խալդական արձանագրություններում կոչվում ե Շուրայի կամ Բիայնայի թագավորութուն: Սարգուրի վորդի Իշպուինը մի արձանագրու-

թյան մեջ իրեն անվանում ե «թագավոր Նայիրիի և Շուրայի, վոր բնակում ե Տուշպա քաղաքում»: Խալդական պետութայն կենտրոնն աշխարհագրորեն գտնում ե Վանի լճի արևելյան յերկերը:

Եթե Արամեն համարվում ե խալդական պետութայն հիմնադիրը, ապա Իշպուինի վորդի Մենուան (805—780 թ. թ.) հանդիսանում ե խալդական պետութայն ամբողջացնողը և թագավորական կենտրոնական իշխանութայն ամրապնդողն ու ծավալողը, վոր հաջորդությամբ պայքարում եր Ասորեստանի նվաճողական եքսպանսիայի դեմ: Մենուայի որով խալդական արձանագրություններում անհետանում ե Նայիրի անունը և այնուհետև հիշատակվում ե արդեն Խալդ անունը: Մենուան, հետևելով արևելյան աշխարհակալներին, յուրացնում ե նրանց տիտղոսը՝ «արքա հզոր, արքա աստվածային, արքայից արքա», վոր ցույց ե տալիս նրա քաղաքական նշանակութունն ու դերը խալդական պետութայն մեջ: Ըստ այնմ ել Բիայնան կոչվում եր «յերկրների յերկիր»: ✓

Մենուան առաջինն եր խալդական թագավորներից, վոր արշավում ե Անդրկովկաս և գրավում Սևանի լճի շրջանում գտնվող Ետիունի և Ուտարուխի յերկրները:

Մենուան, բացի ռազմական ու քաղաքական գործունեյությունից՝ ցուցաբերում ե լայն շինարարական գործունեյություն և արձանագրություններում, վորոնց թիվը հասնում ե մոտ 50-ի, հավերժացրել և իր մեծագործ կառուցումները: Նույնպիսի քաղաքական ու շինարարական մեծ գործունեյություն են զարգացնում Մենուայի վորդի Արգիշտի I (780—755 թ. թ.) և վերջինի վորդի Սարգուր II (755—730 թ. թ.), վորոնց որով խալդական պետութունը հասնում ե իր ծաղկման և ուժի ամենաբարձրը աստիճանին:

Արգիշտի I և Սարգուր II իրենց նվաճողական եքսպանսիայում հասնում են արևելքում մինչև Ուրմիայի լիճը և ապա հյուսիսում անցնելով Արաքս գետը, իրենց իշխանությունը տարածում են Անդրկովկասում, այժմյան Խորհրդային Հայաստանում, սահման ունենալով հյուսիսում Չալդեր լիճը (Լենինականից դեպի հյուսիս) և Արագածի հարավային լանջերը, իսկ հյուսիս-արևելքում Սևանի լիճը: Այստեղ նրանք կա-

ուսցում էին ամրոցներ, քաղաքներ, ջրանցքներ և այլն, վորոնց մասին հիշատակում են արձանագրութուններում: Այս նվաճված յերկրում նրանց գլխավոր վարչա-ուսումական կենտրոնը դառնում է Արմավիր քաղաքը, վոր այսոր մի անբնակ բլուր է, թագցրած ունենալով իր խորքերում ուրարտական հարուստ հուշարձաններ:

Սակայն Սարգուր II-ի թագավորութան վերջին տարիները դժբաղդ յեղան խալդական պետութան համար: VIII դարի յերկրորդ կիսին Ասորեստանը նորից սկսեց ուժեղանալ և Թրգլետ-Պիլեսեր III-ի որով (747—728 թ. թ.) վերականգնեց իր նախկին հզորութունը: Ասորեստանը 739 թ. հարձակումներ և ձեռնարկում խալդական պետութան վրա և կարողանում է պարտված Սարգուրից յետ խել նախկին ասորեստանյան հողերը և նույն իսկ ասպատակել խալդական պետութան կենտրոնը Վանի շրջակայքով: Վերսկսվում է կատաղի պայքար աշխարհակալութան նոր ձգտումներով տարված Ասորեստանի և նույնպիսի աշխարհակալությամբ բարձրացած խալդական պետութան միջև, պայքար, վոր դրեթե 70 տարի դադարել էր: Ասորեստանի անբնդհատ հարվածների տակ խալդական պետութունը սկսեց թուլանալ, միմյանց հատկից կորցնելով իր հողերը և ավարտական ասպատակումների յենթարկվելով գրեթե մինչև 626 թ., յերբ Ասորեստանն սկսում է ինքն ել ճգնաժամային որեր ապրել: Խալդական պետութունն այժմ ամփոփվում էր իր նախորդ սկզբնական տերիտորիալ սահմաններում, այն է՝ Բիայնայի՝ Վանյան թագավորութան մեջ, Արածանիից հարավ և Վանի ու Ուրմիայի լճերի միջև ընկած տարածութան վրա:

Այդ ժամանակ Առաջավոր Ասիայի քաղաքական բեմի վրա առաջ է գալիս հզոր Մեդական պետութունը, իսկ միջագետքում էլ Ասորեստանի կողմից յերբեմնի տապալված Բաբելոնը վերականգնում է իր քաղաքական դիրքը: Սրանց միացյալ հարվածների տակ 612 թ. իսպառ չքանում է պատմական ասպարիզից Ասորեստանը, վոր իր անկ տիրապետութան ներքո յեր պահում մի ժամանակ ամբողջ Առաջավոր Ասիան:

Այս դարաշրջանում զարգացող պատմական իրադարձութունների տակ, յերբ Առաջավոր Ասիան յենթարկվում էր տակ-

նուվրայութան և հեղաշրջվում էր նրա ամբողջ քաղաքական պատկերը, խալդական պետութունն իր վերջին թագավոր Ռուսա III-ի հետ մի առ ժամանակ կարողացավ պահպանել իր գոյութունը (605—585 թ. թ. նախքան մեր թվարկ.), մինչև վոր վերջնականորեն վերացավ ասպարիզից մեզ համար տակավին վոչ այնքան պարզ հանգամանքներում: Միջավանական յենթարդությամբ, խալդական պետութունը հիմնահատակ կործանվեց մեզացիների հարձակումից, վորոնք նվաճեցին ու միացրին այդ տերիտորիան իրենց պետութանը: Մեդական այս նվաճման ժամանակ մեդացիների հետ էլին նաև արմենները, վորոնք նոր էլին բարձրանում պատմական ասպարիզում, ահա այդ ժամանակ, ինչպես կարելի չէ կռահել աղոտ պատմական տվյալներից, արմենները հաստատվեցին խալդական նախկին պետութան տերիտորիայում: ↓

Շուրջ 300 տարի գոյութուն ունեցավ խալդական պետութունը և ժողովուրդը, իրոք կարճատև պատմական կյանք մի պետութան համար: Սակայն չքանալով բոլորովին պատմական ասպարիզից, նա թողել է հարուստ հիշատակ իր մասին, վոր արտահայտվում է բազմաթիվ սեպածե արձանագրութուններում փառահեղ կառույցներում ու անսպառ հնագիտական մնացորդներում: Այդ ամենը վկայում է արագ քայլերով քաղաքականապես յերբեմն բարձրացող և նյութական կուլտուրայի ասպարիզում զարգացող մի ժողովրդի կյանքի մասին, վոր այսոր Առաջավոր Ասիայի պատմութան հետաքրքիր էջերից մեկն է կալում:

#### IV

### Սոցիալ-սնտեսական կառույցեր

Հայկական բարձրավանդակի կլիմայական պայմանները և, մասնավանդ, յերկրային սելյեֆն իր հովիտներով, ձորերով ու սարալանջերով, արզավանդ դաշտերն արհեստական վոտոգումով ընձեռնում էլին Նայիրիի ազգաբնակչությանը գերազանցորեն յերկրագործական ու անասնապահական տնտեսութուն վարելու հարմարութուններ: Այդ են վկայում արձանագրական ավյալներն ու հնագիտական մնացորդները: ↓ Ասորեստանյան

Աստուրնասիրբալ թագավորն իր արձանագրութեան մեջ նշում է.  
«Նայիրիի հունձքը հնձեցի և յերկրիս համար այդ ամենը Տուսի-  
այի, Դամոզամուսայի, Սինաբուրի և Տիգուի մեջ համբարեցի»:  
Ասորեստանյան թագավորները Նայիրիի յերկրները նվաճելիս՝  
կառուցում էին այդտեղ հատուկ հսկայական շտեմարաններ, ուր  
հավաքում էին տեղական բնակչութունից տուրքերն ու պետա-  
կան հարկերը բնական արգասիքներով: Այդպիսի շտեմարաններ  
կային Նայիրիի Բիտ Զամանի յերկրի Տուշա ամրոցում: Նույնն  
էին անում խալդական թագավորները: Թոփրակ-Կալեյի (Վանի  
մոտ) պեղումներով գերմանացի ու բարսապետ Լեման-Հաուպտը  
հայտնաբերել է այդ տեսակ մասան-շտեմարանի ավերակներ, վոր  
գտնվում էր բլրի վրա կառուցված տաճարից մի փոքր հեռու:  
Այդ ավերակներից դուրս էին հանված մոտ 25 կավե մեծ կա-  
րասների բեկորներ, վորոնք ծառայում էին վոչ միայն գինի,  
այլ և հացահատիկներ պահելու համար: Բացի բազմաթիվ ձեռ-  
քի պրիմիտիվ աղորիքներից ու սանդերից, վորոնք հայտնաբեր-  
վել են նախկին Նայիրի յերկրում հնադիտական հետախուզում-  
ներով, Լեման-Հաուպտը գտել է ժայռակոփ ամրոցներին ու բը-  
նակատեղերին կից ջրաղացների հետքեր: Ուշադրութեան արժա-  
նի յե նաև այն, վոր հնագիտական պեղումների հետևանքով հայ-  
տնաբերվել են խալդական մանդաղներ ու խոփեր: ✓

Յերկրագործութեան մեջ հացահատիկների մշակույթին կից  
գարգացած էր նաև այգեգործութեանը: Հարկեք թվում մըտ-  
նում էր և գինին:

Յերկրագործութեան զարգացման ամենամեծ ապացույցն  
այն ջրանցքաշինարարութեանն է, վոր այնպիսի հեռուգործյամբ  
առաջ էին տանում խալդական թագավորները վոչ միայն կենտ-  
րոնում՝ Վանում, այլ և նվաճած յերկրներում, որինակ Արագածի  
լանջերում, Արարատյան դաշտում՝ Արմավիր, Վաղարշապատ,  
Յերևան քաղաքների մոտ: Զրանցքներ կառուցելով, այդ թագա-  
վորները տնկում էին այգիներ, գլխավորապես խաղողի և խո-  
պան հոգերը հացահատիկային մշակույթի վերածում:

Անասնապահութեան զարգացման մասին հասել են մեզ  
բավականաչափ տեղեկութուններ, վորոնցից յերևում է, վոր  
առաջին տեղն էր բռնում վոչխարաբուծութեանը և ապա խոշոր  
անասունների բուծումը, սրանց թվում նաև ձիերի: Թե ասորես-

տանյան թագավորները Նայիրիի վրա արշավելիս և թե խալ-  
դական թագավորներն իրենց սագմական արշավանքների ըն-  
թացքում ահագին քանակով անասուններ էյին ավար վերցնում:  
Թացքում ահագին քանակով զնառում էյին Ասորեստանին  
Նմանապես Նայիրի յերկրները վճարում էյին Ասորեստանին  
հարկեր անասուններով, գլխավորապես ձիերով ու յեղներով:  
Նույնպիսի հարկեր էյին վերցնում խալդական թագավորներն  
իրենց նվաճած յերկրներից: Հետաքրքիր է, վոր խալդական թա-  
գավոր Արգիշտի V, ճանաչելով Ասորեստանի հաղթական թագա-  
վոր Սարգոնի գերիշխանութեանը, տուրք էր վճարում նրան ձիե-  
րով:

Սակայն գյուղատնտեսական արտադրութեան հետ միասին  
գարգացած էր նաև արհեստագործութեանը, մասնավաճառ խալդե-  
րի մեջ: Սա մի ցայտուն ապացույց է, թե վորքան մեծ չափով  
այստեղ առաջ էր գնացել աշխատանքի հասարակական բաժա-  
նումը:

Արհեստների շարքում նշանավոր էր մետաղագործութեանն  
իր գանազան ճյուղերով: Առաջին հերթին տեսնում ենք բրոնզե ու  
պղնձե իրերի արտադրութեան, այնուհետև յերկաթագործութեան,  
վոսկեգործութեան և արծաթագործութեան: Ասորեստանյան ու  
խալդական թագավորների ավարների մեջ գերակշռող տեղ են  
բռնում պղնձե ու բրոնզե իրերը, գլխավորապես անոթներ, կաթսա-  
ներ, պնակներ, կոնքեր և այլն: Նույնիսկ տուրքերի ու հարկերի  
թվում հանդիպում ենք մեծ քանակով մետաղագործական ար-  
թվում հանդիպում ենք մեծ քանակով մետաղագործական ար-  
տադրանքների: Ասորեստանի թագավոր Աստուրնասիրբալը մի  
արձանագրութեան մեջ նշում է. «Զորիների, արջառի, վոչխար-  
ների, գինու, պղնձե անոթների հարկը և տուրքն առաջ-  
վանից ավելի բարձրացրի»:

Մետաղագործութեան այդ զարգացումը բոլորում էր նրանից,  
վոր հայկական լեռնաշխարհը հարուստ էր մետաղանյութերով,  
մասնավաճառ պղնձով ու յերկաթով: Այդ հանգամանքը թերևս  
խթան էր հանդիսանում մետաղահանքերով վոչ այնքան հա-  
րուստ Ասորեստանին ավարառու սագմարշավանքներ ուղղել  
հեպի Նայիրի ու խալդական յերկրները, իրեն անհրաժեշտ մե-  
տաղներ ձեռք բերելու նպատակով: Լեռնահանքերի առատու-  
թեանը, նմանապես մետաղագործութեան հնութեանն ու բարձր  
զարգացումը Նայիրիի, մասնավորապես խալդական յերկրում՝

հիմք ե ծառայել մի շարք պատմագետներին կարծիք հայտնելու, վոր բրոնզի և ապա յերկաթի մշակման գյուտի հայրենիքը յեղել ե Հայկական լեռնաշխարհը:

Մետաղագործության հետ կապված ե դինագործությունը, վոր հիմնական նշանակություն ուներ այնպիսի մի հասարակության համար, ինչպիսին եր խաղաղանն իր անդադար ուղղական պայմաններով:

Այնուհետև ուշագրավ ե կավագործությունը, վոր խաղերի մեջ մեծ զարգացման եր հասել, մանավանդ գունավոր կավի անոթների արտադրությամբ: Բացի այդ՝ կավից հյին պատրաստում այն աղյուսիկները, վորոնք ծառայում եյին գրելու համար, նման մեր այժմյան թղթի:

Այդ արհեստների բարձր զարգացումը և բազմապիսուցությունը մի բնորոշ փաստ ե, վորի վրա հիմնվելով կարելի յի կուսել, վոր խաղական հասարակության մեջ պետք ե զարգանային նաև առևտրական հարաբերություններ, թեև այդ մասին պատմական աղբյուրները դեռ ևս վոչինչ չեն հաղորդում: Հայկական լեռնաշխարհն ընկած եր այն ժամանակվա տրանզիտային առեկտրի գլխավոր ճանապարհի վրա՝ Պարսից ծոցից, Միջագետքի վրայով, դեպի Միջերկրական ծովը, Փոքր Ասիա և Սեզ ծովը: Ասորեստանն իր վաճառաշահ նիստեև մայրաքաղաքով միջնորդ առեկտրական դեր եր խաղում: Ասորեստանի անհանգիստ նվաճողական եքսպանսիան ու աշխարհակալական քաղաքականությունը բղխում եյին մասամբ հենց այդ առևտրական շահերից, վորոնք թելադրում եյին իր ձեռքի, իր անմիջական իշխանության տակ ունենալ դեպի Միջերկրական, Միջերկրական ծովի այն ժամանակվա շահաստանները, դեպի Փոքր Ասիայի ծովեզերքը և այլուր տանող ճանապարհները, վորոնցով յերթեկում եյին առեկտրական կարավաններ ասիական Ասորեստանի նախորդ՝ Բաբելոնի տիրապետութան ժամանակ: Մեզ չեն հասել խաղական գրամներ: Ուստի պետք ե յենթադրել, վոր յիթե գոյություն են ունեցել մեր նշած առեկտրական հարաբերությունները, ապա այդ յեղել ե կամ պարզ փոխանակային առևտուր, կամ գրամի փոխարեն գործածվել են վոսկու և արծաթի ձուլեր և կամ գործածվել են ասորեստանյան գրամներ:

Ահա այդ արտադրողական ուժերի զարգացման պայման-

ներում խաղական հասարակությունը դասակարգայնորեն տրոհված մի կազմ եր ներկայացնում, վոր մարմնացել եր յուրահատուկ ասիական ձևի պետականության մեջ, նման Ասորեստանի, Հեթիտական և այլ պետություններին:

Խաղական հասարակությունը ձևավորվել եր վորպես բնականական մի պետություն, վորտեղ իշխանությունը կենտրոնացած եր գեսպոտ թագավորի ձեռքին: Տիրապետող դասակարգը բաղկացած եր ուղղակի նվաճող տարրերից՝ ազնվական դասից, նմանապես քրմական դասից: Թագավորի գլխավորությամբ նրանք շահագործում եյին վնչ միայն իրենց յենթակա նվաճված բնակչությունը հանձնու իսկական արտադրողներին, այլ և շահագործման յեղանակներից մեկն ել գործելու եյին պատերազմը: Խաղերայի տիրապետող դասակարգի բնույթը վորոշելու համար մեզ հայտնի պատմական ավյալներում աչքի յի զարնում այն գերը, վոր խաղում եր նրա կյանքում պատերազմը: Խաղական թագավորներից մեզ հասած արձանագրությունները, յիթե յերբեմն խոսում են վորոշ շինարարական գործերի մասին, ապա միշտ ու անվերջ հիշատակում են իրենց վարած պատերազմները, թշնամիների վրա տարած հաղթանակները, հարուստ ավարտուսներն ու գերավարությունները, նվաճած յերկրներում ամրոցներ կառուցելը և այլն: Դա մի ուղղական-պարզիտային պետություն եր, վորի տիրապետող հասարակությունն իր գոյության նյութական միջոցը տեսնում եր ուղղական ձեռնարկություններում:

4439  
39

Մակայն միաժամանակ այդ գիշատիչ միջոցի հետ նա կիրառում եր, հենվելով իր ուժի վրա, նաև արտատնտեսական ճնշումներն իրեն յենթակա սոցիալական խավերը շահագործելու նըպատակով: Այդ շահագործվող ներհակ դասակարգը կազմում եյին ստրուկների մասան, գյուղացիությունը և ապա արհեստավորական դասը:

Անընդհատ պատերազմները տիրապետող դասակարգի համար հարուստ գերեզմարության աղբյուր եր դառնում: Անշուշտ այդ գերիների ճնշող մեծամասնությունը մտնում եր ստրուկների շարքը, վորոնց աշխատանքը շահագործման ամենադյուրին միջոցն եր պարզիտային հասարակության համար: Այդ ստրուկները, ինչպես կարելի յի յիզրակացնել մի քանի արձանագրություններից, մեծ



քանակի էյին հասնում: Արգիշտի 1 թագավորը էր վարած պատերազմների ընթացքում նախկին Նայիրի յերկրներից գերի յերտարել 79.936 տղամարդ, 52.381 կին, 73.512 յերեխա, 10.140 զինվոր, ընդամենը 215.969 հոգի: Սրա վորդի Սարգուր II գերի յերտարել 4.600 տղամարդ, 23.200 կին, 10.000 պատանի, ընդամենը 37.800 հոգի:

Մարուկները, բացի տիրապետող դասակարգի սեփական տնտեսութուններում շահագործվելուց, անշուշտ ավելի մեծ չափերով գործադրվում էյին հասարակական-պետական աշխատանքներում, վոր ձեռնարկում էյին խաղաղական թագավորները: Հրակայական ու մոնումենտալ ջրանցքաշինարարութունն, ամրոց-բերդերի ու քաղաքների կառուցումները հնարավոր էյին միմիայն ստրկական աշխատանքի կիրառումով: Զարգացած մետաղագործության համար պահանջելի հում մետաղը պայմանավորված էր լինանային հանքերի մշակումով, վորտեղ, անտարակույս, գործազբրվում էր սոսկ ստրուկների բանվորական ուժը:

Ստրկական աշխատանքի շահագործման կից միաժամանակ շահագործվում էր նաև գյուղացիական դասը: Թեև խաղաղական արձանագրութունները մեղ չեն տալիս ուղղակի տեղեկութուններ այդ մասին, բայց մի քանի տվյալներից կարելի յի կռահել, վոր իրականում շահագործվող դասակարգի մեջ տեղ էր բռնում նաև գյուղացիութունը:

Խաղաղական թագավորները, ինչպես գիտենք, տուրքեր ու հարկեր էյին հավաքում իրենց հպատակներից: Յեթե տուրքեր վճարում էյին նվաճված յերկրների պետերն ու իշխանները, ապա հարկերը գանձվում էյին իսկական արտադրողներից, վորոնք կարող էյին լինել գյուղացիները, յեթե ի նկատի ունենանք, վոր ժողովրդական տնտեսության հիմքը կազմում էյին յերկրագործությունն ու անասնապահությունը, այսինքն գյուղատնտեսությունը: Անտարակույս, հարկ վճարում էյին վե՛չ թե ստրուկները, վորոնք անձնապես իրավազուրկ էյին և միայն իրավունքի որչիկտ էյին հանդիսանում և վորոնք ի բնի պարտավոր էյին աշխատելու ստրկատիրոջ մոտ, այլ այն արտադրողները, վորոնք զբաղվում էյին գյուղատնտեսությամբ: Իսկ այդ արտադրողները, գտնվելով անտեսական ճնշման տակ, կազմված էյին հոգին ու զարձե՛լ էյին ճորտեր: Այդ հարկերը, ինչպես վերն արդեն նշել

ենք, հատուցվում էյին բնական արդյունքներով: Սակայն չի բացառվում և այն, վոր տիրող ստրկական աշխատանքի սկզբունքը արամաբանորեն թելադրում էր նաև հարկի աշխատապարտ ձևը, այսինքն գյուղացին պարտավոր էր կռաային կարգով աշխատել իր տիրոջ համար: Այդ գյուղացիական հարկը, ինչպես ապացուցում է կ. Մարքսը, արևելյան յերկրներում վերածվում է հողային սեփականության, այստեղ հարկն ու հողային սեփական նույնանիշ են, վորովհետև հողային միակ սեփականատերը՝ ինքը պետութունն է (К. Маркс—Капитал, т. III, ч. 2, с. 570, 1932 թ.):

Մի թեթև ակնարկ ենք գտնում Ասորեստանի Մարգոն թագավորի արձանագրության մեջ այն մասին, վոր խաղաղական թագավորության մեջ յեղել են յերկրագործները, հողի մշակութով աշխատողներ: Խոսելով խաղաղական թագավոր Ռուսա I-ի ջրանցքաշինարարության մասին Արաբատյան գաշտում, Մարգոնն ավելացնում է. «և հնչում էր բնակիչների ականջին հողագործի զվարթ յերգն այն արտերում, վորոնք մինչև այդ խոսպան էյին»:

Դառնանք այժմ շահագործվողների յերրորդ դասին, այն է արհեստավորներին: Խաղաղական պետության մեջ արհեստագործության զարգացումը պետք է վերաբերի աշխատանքի հասարակական բաժանման խորացման, վոր իր հերթին հետևանք էր արտադրողական ուժերի զարգացմանը: Իհարկե, արհեստների բնագավառում գործազբրվում էր ստրուկների աշխատանքը, բայց դա լինում էր մեծ մասամբ տնային տնտեսության մեջ, ինքնավորի, տնտեսության կարիճներն ու պահանջները լրացնելու գծով: Բացի այդ՝ ստրկատիրական հասարակությունների պատմությունից հայտնի յի, վոր ստրկական աշխատանքը յերբեք արտադրության տեխնիկայի ու առաջդիմության խթան չի յեղել: Հետևապես խաղաղական արհեստագործության բազմազան ճյուղերի զարգացած վիճակը պետք է վերաբերի միայն մասնապիտացած արհեստավորներին, վորոնք ընդունակ էյին կատարելագործել իրենց աշխատանքի ձևերն ու յեղանակները: Այդ արհեստավորները, սոցիալապես ստրուկներ չլինելով հանդերձ, միաժամանակ սոցիալապես արհե-

ված էյին, աշխատանքի բաժանման հետեւում, նաև գյուղացիներից: Արհեստը բաժանվել էր յերկրագործութունից:

Ուրեմն արհեստավորները կազմում էյին առանձին սոցիալական դաս, վոր մտնում էր շահագործվող գասակարգի շարքը: Այսպես չէր ել կարող լինել, քանի վոր տիրող հասարակական կազմը հիմնված էր յերկու ներհակ գասակարգերի արտադրական հարաբերութունների վրա, այն է՝ մի կողմից տիրապետող ազնվական գասակարգի արտատնտեսական ճնշման ու շահագործողական յեղանակների վրա, իսկ մյուս կողմից՝ ճնշված ու յենթակա մաստանների աշխատանքից կորզվող արդյունքների վրա: Սակայն ինչպես էր արտահայտվում արհեստավորների կախումը տիրապետող գասակարգից և ինչ ձևով էյին նրանք շահագործվում՝ առայժմ դժվար է ասել համապատասխան պատմական ավյալների բացակայության պատճառով: Համենայն դեպս մի հավանական յենթադրութուն կարելի յի անել, վոր արհեստավորներն անձնապես ազատ էյին լինելու և վճարում էյին հարկ:

Ամփոփելով վերն ասածները խալդական պետության սոցիալ-տնտեսական ձևվերի մասին, պետք է նշենք, վոր մեզ հասած պատմական ավյալները այնքան կցկտուր և անորոշ են, փաստական նյութն այնքան աղքատ, վոր դեռևս դժվար է քիչ թե շատ վորոշակի յեզրակացության հանդեր:

Զժխտելով այն հիմնական դրույթը, վոր ստրկատերերն ու ստրուկները հասարակության առաջին բաժանումն է գասակարգերի, այնուամենայնիվ խալդական հասարակութունը չի կարելի համարել ստրկատիրական Ֆորմացիա այն իմաստով, ինչպես դա յեղել է անտիկ աշխարհի Հունաստանը կամ Հռոմը, ուր տիրում էր արտադրության ստրկական յեղանակը: Մենք տեսանք, վոր խալդական հասարակության մեջ իսկական արտադրողները, բացի ստրուկներից, հանդիսանում էյին նաև գյուղացի-յերկրագործները, վորոնք նույնպես կախումն ունեյին տիրապետող գասակարգից: Այստեղ ստրկութունը դեռ չէր հասել զարգացման այն աստիճանին, վոր յերկրի տնտեսության մեջ տիրապետող ձեւ գառնար: Այստեղ դեռ պահպանվում էյին ստրկության նախնադարյան ձևերը, վորոնք անկարող յեղան ասպարիզից դուրս վանելու տոհմացե-

ղային համայնքի քայքայումով առաջացած գյուղական համայնքի դերը արտադրական հարաբերութուններում:

Հոմանիշ յերեւելթ նկատվում է նաև մի շարք այլ ժողովուրդների կյանքում: Յ. Ենգելսն այդպես էր իրեն պատկերացնում ստրկության դերը հին դերման հասարակության մեջ, ասելով, վոր դերմանական ստրկութունը չզարգացավ հասնելու անտիկ ստրկությանը: Լենինը նույնպես «Պետության մասին» գասախոսութուններում, նշում է «հասարակության փոխանցումն ստրկության նախնադարյան ձևվերից դեպի ճորտութուն»:

Ամենայն դեպս, պետք է ընդունենք, վոր խալդական հասարակութունը, հանդիսանալով բազմա-պարագիտային ձեւի պետութուն և պարունակելով մեծաքանակ ստրկութուն, յուրատեսակ ստրկատիրական հասարակութուն էր, վորտեղ գոյութուն ունեւր նայել ճորտութուն, մի հանգամանք, վոր բնորոշ էր Ասիայի սոցիալ-տնտեսական պայմաններին և ներկայացնում էր ստրկատիրության թերևս Ֆեոդալիզմի ասիական տարբերակ:

V

## Նյութական կուլտուրա

Նախկինը, շուրջ 300 տարի պետական կյանք ունենալով, կարողացել են զարգացնել այնպիսի մի կուլտուրա, վորի մնացորդները, այսօր, հետզհետե յերևան գալով հնագիտական հետախուզումների շնորհիվ, վկայում են այդ ժողովրդի նյութական կուլտուրայի բարձր աստիճանի ու հոյակապության մասին: Այդ կուլտուրան կրում է իր մեջ մի կողմից՝ արևմտյան տարրեր, այն է՝ հեթիտական ու ընդհանրապես փոքր-ասիական և մյուս կողմից՝ ներծծել է նաև արևելյան տարրեր, զլխավորապես ասորա-բաբելական կուլտուրայի հյական գծերը: Միևնույն ժամանակ խալդական կուլտուրան իր զարգացման ընթացքում չի կարկամել ինքնամփոփ սահմանների մեջ, այլ խալդ ժողովրդի նվաճողական արշավանքների հետ տարածվել է դեպի հյուսիս, Արաքսի վրայով դեպի Անդրկովկաս և այստեղից էլ թափանցել

ե անկի հետևեցրը, առևտրական ճանապարհներով մինչև Ռուսաստանի հարավային տափաստանները, վորտեղ արդի հնագիտությունը նշմարում է այդ կուլտուրայի հետքերը:

Սալզերի կուլտուրայի զարգացման կենտրոնավայրը պետք է համարել Վանի լճի մարզը և մասնավորապես նրանց Տուշպա-Վան մայրաքաղաքը: Առայժմ չիսկաճական հնագիտական պեղումներով այդ կուլտուրայի նյութական մնացորդները մեծ մասամբ հայտնաբերվել են հենց այդ վայրում: Սալզական հուշարձանները նկարագրվել են հայ հին մատենագիրները մեկի, այն է՝ Մովսես Խորենացու պատմության մեջ, վորտեղ, սակայն, Վանի հոյակապ հնությունները վերագրվում են ասորեստանյան առասպելական թագուհու՝ Շամիրամի շինարարական գործունեությանը: Մովսես Խորենացուն, հետևապես նրա ժամանակվա հասարակությանը (VII—VIII դ.դ. մեր տարեթիվ.) արդեն անհայտ էր խալդերի յերբեմնի դոյություն պարագան:

Առաջ ենք բերում Մովսես Խորենացու բավականի ընդարձակ նկարագրից (չիրք II, գլ. 16) քաղվածորեն մի քանի բնորոշ կտորներ (թարգմանաբար զբաբարից):

«Շամիրամը հրամայում է նախ շինել գետի ամբարտակը ապառաժներով և խոշոր քարերով, և կրով ու ավազով միավորել անչափ լայնությունը ու բարձրությունը, վորը, ինչպես ասում են, հաստատ կա մինչև այսօր: ... Նայելով քարերը ճարտարությունը միմյանց կապող ավազ ու կրին, նայողը կկարծե, թե ճարպ լինի ածած: ... Նա շինում է նույպես քաղաքի մեջ պիսպես քարերից և գույններից զարդարված կրկնահարկ ու յեռահարկ ընտիր ապարանքներ: ... Գետի մի մասը բաժանելով անց է կացնում քաղաքի մեջով ամենայն պիտոյքի համար բուրաստաններ ու ծաղկոցներ շրջելու, իսկ մյուս մասը, ծովակի աջ ու ձախ ակերի մոտ քաղաքը և նորա բոլոր շրջակայքը՝ շրջելու: ... Պարսպած գազաթի վրա Շամիրամը շինում է ցածուկ, ահագին, զժվարածուտ և զժվարելանելի թագավորանիստ շենքեր, վորոնց կառուցվածքի զրուծյունն ու վորպիսուծյունը վոչ վորեից չի հասել մեր ականջին ճշմարտությունը, ուստի և չենք կամենում պատմության մեջ զետեղել, բայց միայն կասենք, վոր թագավորական բոլոր գործերի մեջ, ինչպես լսել ենք, սա առաջին և առավել փառավոր է համարվել: ... Իսկ արևի հան-

դեպ դարձած քարանձավում, վորի վրա այժմ վոչուք չի կարող յերկաթով մի գիծ քաշել,—այնքան պինդ է նյութը,—Շամիրամը դանազան պալատներ, ոթեաններ, գանձատներ ու յերկար վիհեր,—վոչուք չգիտե, թե ինչ նպատակի համար,—հրաշակերտեց: Գարի ամբողջ յերեսի վրա, իբր զըշով հարթ մոմի վրա, շատ գրեթե զրեց, վորի միայն տեսքը զարմացնում է ամենքին: Ինչպես տեսնում ենք, Մովսես Խորենացին, այստեղ ակնարկում է ջրանցքաշինարարության, քարակոփության կիրկուպյան կառուցքի և վերջապես բենուաղբերի վրա:

Ջրանցքաշինարարության հոյակապ գործ է Մենուա թագավորի Վանում կառուցած ջրանցքը՝ վոր այսօր էլ գոյություն ունի «Շամիրամ-սու» անունով և վոռոգում է քաղաքի այգեստանները: Այդ ջրանցքը մոտ 80 կիլոմետր յերկարություն ունի և տեխնիկական չափազանց բարդ կառուցվածք է ներկայացնում, վորի հունը փորված է բարձր տեղերում սեպ ժայռերի լանջերին, իսկ ցածր տեղերում արհեստականորեն բարձրացած ամբարտակների ու քարաշար պարիսպների սխտեմ է հանդիսանում:

Նույնպիսի ջրանցքաշինարարական կոթող է Ռուսա II թագավորի կառուցած մեծ ջրանցքը Վանի մոտ Թոփրակ-Կալեյում, հսկայական ավազանով, վոր այսօր էլ գործում է ու հայտնի յեՔեշիշ-գյուլ անունով: Նույն Ռուսայի մի այլ արձանադրությունից, վոր գտնվել է այժմյան Չվարթնոցի ավերակների մոտ, յեղրակացվում է, վոր Չանգու գետից, Յերևանի մոտ, խորունկ ձորում, բազալտի մեջ փորված տոնելներով հանվել են ջրմուղներ, վորոնցից մեկն այսօր էլ վոռոգում է Յերևանի Դավա կոչված այգիները, իսկ մյուսը՝ Յերևանի ու Վաղարշապատի միջև ընկած հողերը: Նմանապես ջրմուղներ են կառուցվել Արաքս գետից Արարատյան դաշտի հարավային մասերը վոռոգելու նըպատակով, որինակ՝ Արմավիր քաղաքի մոտ և այլն:

Քարակոփության կամ ժայռափորության մեջ խալդերը ցումարերել են մեծ հմտություն ու ճարտարփեսու Վանի զժվարաստաչելի ժայռերում փորված են սենյակներ, զահլիճներ, սանդուղքներ, վորոնք տանում են դեպի ստորին կամ վերին հարկերը: Այդպիսի ժայռակոփ շինություններ խալդերը կառուցել

են պատմական Հայաստանի բազմաթիվ վայրերում՝ Խարբերդի, Հասանկիֆի, Բալոււի, հին Բայազետի մոտ և այլն:

Քարակոփության հետ սերտորեն կապված և քարտաշու-  
թյունը, վոր նույնպես հասել եր մեծ ճարտարվեստի: Այդ կող-  
մից աչքի յեն ընկնում այսպես կոչված կիկլոպյան կառույց-  
ները: Խալդերը կատարելագործված էյին հսկայական մեծության  
ու թանձրության քարերից, վորոնք անհատական մարդկային  
ուժով շարժել անկարելի յեր, պատեր շարելու, շատ անգամ  
առանց մածուցիկ կրով: Այդ կիկլոպյան քարերով, վորոնք ար-  
տաքուստ յերբեմն տաշած էյին լինում, յերբեմն ել անտաշ, կա-  
ռուցում էյին բերդերի ու ամրոցների պատերը, բերդերի շուրջը  
բարձրացնում էյին այդ քարերից քաղաքային պարիսպներ: Քար-  
տաշների կառուցած տաճարները, ինչպես ակներև և Վանի մո-  
տիկ Թոփրակ-Կալեյի ավերակներից, ներկայացնում էյին ճարտա-  
րապետական հոյակապ գործեր: Այդպիսի մի տաճարի պատերը  
մեզ հասել և ասորեստանյան Սարգոն թագավորի քանդակագործ  
հուշարձաններից մեկի վրա տպավորված, վորն արտաքուստ սյու-  
նազարդ, առջևից գոտիկոններով, ճակատից ճարտարակերտված  
և իր ամբողջությամբ մի մոնումենտալ շինք և հանդիսանում:

Քարտաշները նույնպես վարժ էյին գեղեցիկ զարդարանք-  
ներ շինել գունազույն քարերի դասավորումով, վորից ստացվում  
եր յուրատեսակ մոզայիք: Այդպիսի մոզայիքով եր ծածկված  
յեղել Թոփրակ-Կալեյում պեղված տաճարի հատակը: Ինչպես վերը  
տեսանք, գունավոր քարերից զարդարանքների մասին ակնարկում  
ե նաև Մովսես Խորենացին: Քարտաշության արվեստի կատա-  
րելագործումը հնարավորություն էր ընձեռնում խալդերին կանգ-  
նեցնելու այն քարե կոթողները և բարձրաբերձ ժայռերի վրա  
հղված այն յերեսները, վորոնք քանդակվում էյին սեպաձև ար-  
ձանագրություններով:

Մեծազարդությունն, ինչպես արդեն ակնարկել ենք, հա-  
սել եր բարձր զարգացման: Բացի բազմաթիվ առորյա պիտույք-  
ներից բավարարելու համար պատրաստվող պղնձե ու բրոնզե  
անոթներից ու յերկաթե գործիքներից ու վենքերից, խալդ վար-  
պետները պատրաստում էյին զարդարանքի վոսկե ու արծաթե  
իրեր, պղնձե ու բրոնզե ձուլվածքներ: Հնագիտական հետախու-  
զումների շնորհիվ հայտնաբերված վոսկերչական, արծաթագոր-

ժական ու ձուլագործական իրերը վկայում են դեղարվեստական  
նրբության ու տեխնիկական բարձր աստիճանի մասին: Մեզ  
հասել են պեղածո մեղալոններ, արձանիկներ, կանացի զար-  
դեր, թագավորների բրոնզե վահաններ քանդակագործ նկար-  
ներով, գահերի գեղեցիկ վոտներ և այլն, բոլորն ել փայլուն  
արվեստի ապացույցներ: Ասորեստանյան ու խալդական սեպա-  
գրություններում հիշատակվում են աստվածների ու թագավոր-  
ների քանդակագործ և ձուլածո արձաններ, վորոնք գտնվում էյին  
խալդերի կրոնական կենտրոնավայր Մուսասիրի տաճարում,  
վորի քանդակ-նկարը մեզ ավանդել է, ինչպես վերն ակնարկել  
ենք, Սարգոն թագավորը:

Վերջապես կանգ առնենք կավագործության կամ կերամի-  
կայի վրա, վորը խալդական արհեստագործության մեջ աչքի  
ընկնող տեղ եր բռնում: Հնագիտական հետախուզումներով հայտ-  
նաբերվել են կավե թրձած աղյուսիկներ, վորոնք այն ժամա-  
նակ ծառայում էյին գրելու համար, նման մեր այժմյան թղթին:  
Բայց ավելի ուշադրավ են կավե զանազան անոթները, վորոնց  
մեջ տեսնում ենք ահագին կարամներ, նկարազարդված յերկա-  
վոր գոտիներով, նաև կարմիր գույն տված ամաններ, գլխավորա-  
պես սափորներ: Վերջինները խալդական կավագործությանը հու-  
տուկ տեխնիկայի պատկանելիք են և հին կերամիկայի պատմու-  
թյան մեջ աչքի յեն ընկնում իրենց բնորոշ գծերով:

Խալդական նյութական կուլտուրայի այդ հետաքրքիր պատ-  
կերը մենք ուրվագծեցինք միայն այն հնագիտական տվյալնե-  
րի հիման վրա, վորոնք հայտնաբերվել են հատ ու կենտ պեղում-  
ներով ու դիպվածական գյուտերով: Դժբախտաբար մինչև այսօր  
չեն կատարվել սխտեմատիկ ու գիտականորեն ձեռնարկված  
պեղումներ թե՛ Վանի շրջանում և թե՛ մեզանում, որինակ՝ Արմա-  
վիրի բլրում, վորոնք խալդական կենտրոններ են յեղել: Անտա-  
րակույս, այդպիսի պեղումները կը հարստացնեյին մեզ անհրա-  
ժեշտ հնագիտական տվյալներով, կլրացնեյին նյութական կուլ-  
տուրայի մեզ հասած մնացորդները և ավելի մեծ լույս կափռեյին  
խալդերի պատմության մուկ էջերի վրա:

Խաղրական հասարակութեան գաղափարախոսութիւնը

Ինչպես արևելյան մյուս հասարակութիւններում, այնպես էլ խաղրերի հիմնական գաղափարախոսական վերնաշինքը արտահայտվում էր կրոնում: Խաղրերի սոցիալ-տնտեսական կազմին համապատասխան զարգացել ու ձևավորվել է նաև նըրանց հոգևոր կուլուրան: Խաղրերի կրոնական սիստեմը, ըստ իր եյուլթյան, ներկայացնում էր յերկրագործական ու անասնապահական տնտեսական գործունեյութիւնից բխող հավատալիքներէ աշխարհ, իսկ ըստ արտաքին ձևավորման նա արտահայտում էր նրա հասարակական կառույցը: Այդ տեսակետից բնորոշէ Վանի մոտ գտնվող «Մհերի դուռ» կամ «Չոպան-գափուսի» կոչված խորհրդավոր ժայռը իր քարե սեպագիր տախտակով, վորտեղ արձանագրողը մի առ մի թվում է խաղրյան 63 աստվածների անուններ՝ սրանց ատրիճանական դասավորումով և սրանց վերաբերյալ կրոնական պաշտամունքի ու հարգման կարգերով: Աստվածներէ այս մեծաթիվ համախմբումը ցույց է տալիս խաղրական պետութեան կազմավորման բովանդակ պատկերը: Խաղր պետութիւնը կազմվել էր զանազան ցեղերի ու մանր իշխանութիւնների նվաճումով, վորոնք յենթարկվել էյին Խաղր թագավորի կենտրոնական իշխանութեանը: Այդ ցեղերն ու իշխանութիւններն ունեցել են իրենց սեփական աստվածները, վորոնք իբրև նվաճվածներ նույնպես միացվում են խաղրական գիրքից իրոնին և, համաձուլվելով, կազմում են միասնական պանթեոն, ինչպես վոր կազմվել էր միասնական պետութիւն: Այդ 63 աստվածներէ շարքում միայն մեկ կին ենք հանդիպում՝ Շարիս աստվածուհին, վոր նախնական «մեծամայրն» էր լինելու, հոմանիշ հեթիտական Կիբելլային կամ ասորական Իշտարին: Այս պարագան վկայում է, թէ ինչ բացարձակ հայրիշխանական (պատրիարխատական) բնույթ էր կրում հասարակական, ընտանեկան կազմը, անհացնելով նախորդ հնագորայան մատրիարխատի—մայրիշխանութեան բոլոր նշանները:

Խաղրական գերագույն աստվածն էր Խաղրի, վորպիսի անունով էր կոչվում և ինքը՝ ժողովուրդը: Աւրեմն այդ աստ-

վածն ամբողջ ժողովրդի անվանագիրն էր և ներկայացուցիչը: Այդ աստուռ անունով և ի պատիվ նրան են կատարվում բոլոր նվաճումները, շինարարութիւնները: Նա հայր էր բոլոր մնացյալ աստվածների, պաշտպան էր ուրարտական ժողովրդի, հովանավորող՝ թագավորների, հետևապես աստված էր ուժի, քաջութեան ու պատերազմի, վերջապես նա աստված էր յերկնքի: Խաղրի աստուռ հետ էյին՝ Թեյիսպաս ողի ու ջրի աստվածը և ապա Արդինի—արևի աստվածը: Թեյիսպաս իր անունով հեշեցնում է հեթիտական Թիշուպ աստուռն: Թեյիսպասից էլ ծագում է խաղրական մայրաքաղաք Տուշպայի անունը, այժմյան Վանը: Այս յերեք աստվածները կազմում էյին գերագույն յերրորդութիւն խաղրական պանթեոնի մեջ: Խաղրի աստուռ պաշտամունքի դիւրավոր կենտրոնն էր Մուսասիր քաղաքը, վոր գտնվում էր Վանի լճից հարավ-արևելյան ուղղութեամբ գեպէ Աւրմիայի լիճը: Այստեղ էյին դիմում խաղրական թագավորները յերկրպագելու՝ տարած հաղթութիւններից հետո:

Խաղր աստվածը յերկրի վրա մարմնավորվում էր թագավորի անձնավորութեամբ, ուստի Բիսյնայի թագավորը կրում էր «աստվածային» տիտղոս: Թագավորը համարվում էր յերկրային աստված, ուստի տակավին նրա կենդանութեան ժամանակ կանգնեցնում էյին նրա արձանը տաճարներում աստվածային կուռքերի շարքում: Թագավորը, լինելով Խաղր աստուռն յերկրային ներկայացուցիչը, նրա փոխանորդը, միաժամանակ դառնում էր նրա պաշտամունքի գերագույն քուրմը, հետևապես նրա իշխանութիւնը կրում էր վոչ միայն մարմնավոր, այլև հոգևոր բնույթ: Թագավորի մայրաքաղաք Տուշպան համարվում էր աստուռ անթոռանիստ, «Խաղրի քաղաք» ամրոցավայրերը, յեթէ նույնիսկ նրանք հեռու էյին մայրաքաղաքից, կոչվում էյին «դրունք Խաղրի»: ամբողջ պետութիւնը հայտնի յեր «Խաղրի (այսինքն աստուռ) յերկիր» անունով: ↓

Այս կրոնական գաղափարախոսութիւնը տալիս էր խաղրական պետութեանը յուրահատուկ բնույթ, տողորելով ամբողջ պետականութիւնը թեոկրատական վոգով, աստվածապետական իշխանութիւն գաղափարով:

Սաղազիան հասարակութեան պատմութիւնը և ժանա-  
վանդ խաղազիան կուլտուրան մեծ նշանակութիւն են ստա-  
նում հայ ժողովրդի պատմութեան համար: Սաղազիան նախա-  
հայկական պետութիւնն է յեղեղ, վորին հետագայում հաջորդել  
է հայկական պետութիւնը: Սաղազիան այն ժողովուրդն է, վոր  
նշանավոր տեղ ունի հայ եթնոգենիզի մեջ:

Սաղազիան կուլտուրան անընդմիջական նախահայ կուլ-  
տուրան է, վոր, մի ժամանակ տիրապետելով Հայկական բար-  
ձրամշակուած, հետագայում դարձել է նաև հայ ժողովրդի  
կուլտուրայի հիմնական առաղձը:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Б. Турав—История древнего Востока, т. II, 62 33—40,  
1936 թ.
2. И. Мещанинов—Халдоведение, история древнего Вана.  
Баку, 1927.
3. История древнего мира, т. I. Древний Восток, 62 437—  
443.
4. Հ. Սանտալճյան—Ասորեստանյան և պարսիկ սեպագիր արձա-  
նագրութիւնք. Վիեննա, 1901 թ.
5. С. Lehmann-Haupt—Materialien zur älteren Geschichte Ar-  
meniens und Mesopotamiens, հայերեն թարգմանված՝  
«Բաղմովեպ» ամսագիր, Վիեննա, 1908 թ. 62՝ 109—  
114, 197—199, 209—302, 440—444, 486—490,  
550—554.  
1909 թ. 62՝ 8—11, 67—73, 102—1



<< Ազգային գրադարան



NL0405925

ԳԻՆԸ 1 Ռ.